

ԱԿՆԱՅ ԱՆՏՈՒՆԻՆԵՐ

Խալտեցայ խալատ մ'ըրի, իմ ծոցուն բազան թըռուցի,
Ելայ ետեւէն գացի, կես ճամբէն պագիկ մը առի.
Ան պագին քաղցրութենէն բըռընկեր իմ սիրտս ու կ'երի.
Ինձ կուտան շեռպէթ թը խըմէ'.

Ես ան շեռպէթն ինչ ընեմ, իմ վառած կըրակն է քենէ:

Աստղիկ մը երկնուցն ի վար կու սիրէ ձկնակն ի ծովուն.
Ո՛չ աստղիկն է վար գալու, ո՛չ ձկնակն ի վեր գընալու:

Խալտեցայ խալատ մ'ըրի, պագիկ մը գէշէն ուզեցի.
Ան գէշն ալ ի նազ ելաւ, – Չեմ ի տար, անունս կ'աւըրի:
Աղուոր մը՝ ներսէն ի դուրս, – Ի՞նչ միտնէթ կ'ընես ատ գիշուն,
Պագիկն աղուորէն ուզէ՛, ան գիտէ խահրը կտրիճին:

Ծոցիկդ առաւօտ նըման, առաւօտուն շաղերն է ի վրան.
Երթամ բարկ արեւ լինիմ, գամ ցաթեմ շաղերըդ ժողվեմ:

Երթամ թուխ ամպիկ լընիմ, գամ ցաթեմ քու երդիցդ ի վրայ:
Ցածնամ ու ցօղիկ մը տամ քու ճերմակ կրծոցդ ի վըրայ.
Արթըննաս ու վեր իյնաս, – Տօղի՛կ, աս ի՞նչ որ կու ցօղաս:
– Ես անտեղ խարիպ մ'ունիմ, ան կուլայ ու հոս կու ցօղայ.
Տօղա՛, թուխ ամպիկ, ցօղա՛, ցօղալուն ատենն է հիմայ:

Երթամ խաժ կաքուկ լընիմ, գամ թառիմ քու վէնճիրէիդ,
Իժուան ահ ու զար ընեմ, ֆիղանես քունըդ չիտանի.
Որու քուն տանի տանի, իմ ու քու քունը չիտանի: